



## ՀՈՒՇԱԳԻՐ

01.10.2019թ.

ք. Վանաձոր

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովը՝ ի դեմս մարզպետ Անդրեյ Ղուկասյանի՝ մի կողմից, և «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը՝ ի դեմս գործադիր տնօրեն Գագիկ Տարասյանի՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույց հուշագիրը հետևյալի մասին՝

Սույն հուշագրով Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովը հավաստիացնում է իր լիազորությունների սահմաններում աջակցել և համագործակցել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հետ՝ «Տնային խնամք ծերերին» ծրագրի շրջանակներում:

1. Ծրագրի շրջանակներում իրականացվելու են ճանաչողական այցելություններ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի «Տնային խնամք ծերերին» ծրագրի շահառուներին:

2. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության «Տնային խնամք ծերերին» ծրագրային աշխատանքները համապատասխանեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված խնամքի ծառայությունների վերաբերյալ չափորոշիչներին և վերահսկել դրանց պատշաճ կատարումը:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի կողմից առաջարկություններ ներկայացնել «Տնային խնամք ծերերին»՝ ծրագրային աշխատանքների բարելավման համար:

4. Աջակցել «Տնային խնամք ծերերին» ծրագրի աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացմանը՝ միայնակ ծերերի խնամքը արդյունավետ կազմակերպելու համար:

5. Աջակցել տարեցների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների հետ տարվող համագործակցային աշխատանքներին, շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ պարբերաբար կազմակերպել հանդիպում-քննարկումներ՝ հետագա արդյունավետ աշխատանքների խթանման նպատակով:

6. Շահագրգիռ աշխատանքներ իրականացնել տարեցներին նվիրված «Պարգևի ժպիտ» ամենամյա բարեգործական ակցիայի անցկացման ուղղությամբ:

7. Համատեղ աշխատանքի արդյունքում նախապատրաստել տարեցների շրջանում իրականացվող աշխատանքների բարեփոխումներին ուղղված առաջարկությունների փաթեթ: Փաթեթը «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության «Տնային խնամք ծերերին» ծրագրի կողմից ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի նիստին:

Սույն Հուշագրով սահմանված համագործակցությունը համակարգում և վերահսկում են Կողմերի ղեկավար մարմինները՝ լիազորված անձանց միջոցով:

Սույն Հուշագիրը կազմված է երկու էջից, հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից:

Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ Լոռու մարզպետ,

Հաշմանդամություն ունեցող անձանց  
հարցերով զբաղվող Լոռու մարզային  
հանձնաժողովի նախագահ



Անդրեյ Ղուկասյան

(ստորագրություն)

«Հայկական Կարիտաս» բարեսիրական  
հասարակական կազմակերպության  
գործադիր տնօրեն



Գագիկ Տարասյան

(ստորագրություն)